Հավելված 1
Սևան համայնքի ավագանու՝
22.09.2022թ. թիվ 80-Ա որոշման

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքային բյուջե-2022
1-ին կիսամյակ

Եկամուտներ

Միավորված համայնքի 2022թ. 1-ին կիսամյակի բյուջեի եկամուտների /վարչական և ֆոնդային բյուջեները միասին/ պլանը կատարվել է 84.1%-ով: 917.0 մլն. դրամ պլանային եկամուտների դիմաց հավաքագրած և պետական բյուջեից հատկացված դոտացիան կազմել է 771.6 մլն. դրամ, թերակատարումը կազմել է 145.4 մլն. դրամ, այդ թվում՝ վարչական բյուջեի գծով առկա է 107.1 մլն. դրամ եկամուտների թերակատարում, ֆոնդային բյուջեի գծով թերակատարումը կազմել է 92.6 մլն. դրամ է:

2022թ. 1-ին կիսամյակի բյուջեի վարչական մասը կատարվել 86.1 %-ով / պլան՝ 772.0 մլն. դրամ, փաստացի՝ 664.9 մլն. դրամ /: Վարչական բյուջեում սեփական եկամուտները կատարվել են 61 9%-ով / պլան՝ 282.9 մլն. դրամ, փաստացի՝ 115.1մլն. դրամ /: Թերակատարումը կազմել է 107.8 մլն դրամ կամ 38.1 %: Հարկերի և տուրքերի պլան կատարվել է 57.1 %-ով: Հարկերի և տուրքերի մեջ գերակատարվել է միայն գույքահարկ շենք-շինությունների գծով՝ 1.0 մլն. դրամի չափով, իսկ անշարժ գույքի հարկի և տեղական և պետական տուրքերի, տրանսպորտի գույքահարկի գծով առկա են պլանների թերակատարումներ: Ոչ հարկային եկամուտների մեջ գերակատարվել է ինքնակամ կառույցների օրինականացման վճարների և տեղական վճարների եկամտատեսակները իսկ ուսունական, ծնողական վճարները և մնացած ոչ հարկային եկամուտների մասով առկա է թերակատարում:

Հարկ է նշել, ր 2021 թ. հունվարի 1-իվ գործողության մեջ է դրվել անշարժ գույքի հարկը, որը միավորել է նախկին գույքահարկը և հողի հարկը, ինչպես նաև առանձնացվել է փոխադրամիջոցների գույքահարկը հարկը ֆիզիկական և իրավաբանական անձանց գծով: Չնայած առկա բազմաթիվ անճշտություններին՝ ներդրված նոր ծրագրերն աշխատում են անխափան, զուգահեռ աշխատում է նաև գույքահարկերի նախկին ծրագրերը:

Համայնքի բյուջեի 1-ին կիսամյակի թերակատարման պատճառը օբյեկտիվ չվճարումներն են կապված առկա ժամանակաշրջանի հետ:

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները կատարվել է 56.2 %-ով / ճշտված պլան՝ 211.5 մլն. դրամ, փաստացի՝ 118.9 մլն. դրամ /: 2022թ-ի առաջին կիսամյակում ստացվել և ծախսվել է 2021թ. համար նախատեսված 63.3 մլն. դրամի սուբվենցիան:

Համայնքի 2022թ-ի 1-ին կիսամյակի եկամուտների կատարման ավելի մանրամասն ցուցանիշները բերված են հավելված 1-ում:

Հողի հարկ և գույքահարկ

Համայնքի եկամուտների կենսունակ աղբյուրը իրավաբանական և ֆիզիկական անձանց նախկին հողի, գույքահարկի և անշարժ գույքի հարկի հարկման գործընթացից գոյացող գումարներն են: Այս ոլորտը կարիք ունի անընդհատ վերանայման՝ հարկման բազայում անհրաժեշտ փոփոխությունների ներառմամբ, համայնքում գործող ստորաբաժանումների հետ մշտական աշխատանքի միջոցով:

Ծախսեր

Հիմք ընդունելով եկամուտների կատարման ցուցանիշները՝ համապատասխանաբար կատարվել են համայնքի 2022թ. 1-ին կիսամյակի բյուջեի ծախսերը: Համայնքի բյուջեի ծախսերը կատարվել է 86.8 %-ով: 829.6 մլն. դրամ պլանային ծախսերի դիմաց փաստացի կատարվել է 720.3մլն. դրամի ծախս, կամ թերակատարումը կազմել է 109.3 մլն. դրամ, կամ 13.1 % :

Վարչական բյուջեի ծախսերը կատարվել են 84.7%-ով (պլան՝ 642.9 մլն. դրամ, փաստացի 544.6 մլն. դրամ), թերակատարումը կազմել է 98.3 մլն. դրամ: Վարչական բյուջեի փաստացի ծախսերի 44.6%-ը կամ 242.1 մլն. դրամ կազմել են կրթության և մշակույթի ծախսերը, 183.2 մլն.դրամ՝ ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունները՝ 92.6մլն. դրամ՝ սանիտարական մաքրման ծախսեր:

Ըստ առանձին ոլորտների՝ համայնքի 2022թ. 1-ին կիսամյակի բյուջեի ծախսերը կատարվել են հետևյալ չափերով՝ կրթության ծախսերը՝ 99.6 % , մշակույթի ծախսերը՝ 87.3 %:

2022թ. համայնքի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կատարվել են 94.1 %-ով (պլան՝ 199.7մլն. դրամ, փաստացի ծախս՝ 188.0 մլն. դրամ): Համայնքի 2022թ. ֆոնդային բյուջեից վճարվել է 150.7 մլն. դրամ ասֆալտապատման, փոսային հիմնանորոգման պարտքեր, այդ թվում նաև 2021թ.-ի պարտքերը, 63.3 մլն. դրամը վճարվել է 2021թ-ի սուբվենցիայի հաշվին: Համայնքի 2022թ-ի 1-ին եռամսյակի ծախսերի կատարման ավելի մանրամասն ցուցանիշները բերված են հավելված 2-ում:

Պարտքեր

2022թ. հունվարի 1-ի դրությամբ պարտքերը կազմել են 34.7մլն. դրամ:

Բյուջետային գործառնություններից դուրս պարտքեր չկան: 2022թ-ի առաջին կիսամյակում ընթացքում մարվել է 31.1 մլն. դրամ պարտք, այդ թվում՝ 25.1մլն. դրամ ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների մասով 2016թ-ից տեղափոխված պարտքեր:

Սևան համայնքի միավորման արդյունքում գյուղական բնակավայրերից համայնք է տեղափոխվել ընդհանուր 91.1 մլն. դրամ կապիտալ ծրագրերի գծով պարտքեր : Մարվել է 82.8 մլն. դրամը, որից 63.2 մլն. դրամը ստացված սուբվենցիայի հաշվին, 16.6 մլն. դրամը համայնքի հաշվին :

Ընթացիկ բնույթի տղափոխված բոլոր պարտքեր այդ թվում աշխատավարձի գծով, ամբողջությամբ մարվել՝ զրոյացվել են:

Հավելված 2
Սևան համայնքի ավագանու՝
22.09.2022թ. թիվ 80-Ա որոշման

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ				
			ՀԱԶԱՐ ԴՐԱՄՆԵՐՈՎ	
Հ/Հ	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	2022 Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ		
		ՊԼԱՆ	ՓԱՍՏԱՑԻ	ՏՈԿՈՍ
	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ, ՈՐԻՑ	235321.6	134391.2	57.1
1	Գույքահարկ համայնքի տարածքում գտնվող շենք-շինություններից	3520.0	4543.0	129.1
2	Հողի հարկ	24922.5	3697.9	14.8
3	Անշարժ գույքի հարկ	31968.4	14055.8	44.0
4	Գույքահարկ փոխադրամիջոցներից	162060.7	100569.9	62.1
5	Տեղական տուրքեր	6000.0	5711.6	95.2
6	Պետական տուրքեր	6850.0	5813.0	84.9
	ԸՆԴԱՄԵՆԸ ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ՈՐԻՑ	47535.5	40728.2	85.7
7	Ընդամենը հողի և գույքի վարձակալության վարձավճարներ	19691.8	11235.9	57.1
8	Աղբահանության վճար	21160.0	13985.0	66.1
9	Ինքնակամ կառույցների օրինականացման վճար	1000.0	6201.3	620.1
10	Մսումանկապարտեզների ծառայության վճարներ	500.0	407.0	81.4
11	Արտադպրոցական դաստիարկության գծով ծառայության վճարներ	4972.3	4716.0	94.8
12	Տեղական վճարներ	88.9	145.0	163.1
	Այլ եկամուտներ	122.5	4038.0	3296.3
	ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**282857.1**	**175119.4**	61.9
13	ՔԿԱԳ բաժնի պահպանման եկամուտներ	593.8	593.8	100.0
14	Պաշտոնական դրամաշնորհներ	489178.0	489178.0	100.0
	ԸՆԴԱՄԵՆՐ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	**772035.1**	**664891.2**	86.1
	ԸՆԴԱՄԵՆՐ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ, Ա/Թ	**211500.0**	**118929.0**	56.2
1	Հողի օտարումից եկամուտներ	80000.0	43401.9	54.3
2	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում ֆոնդային բյուջե	66500.0	12200.0	18.3
3	Կապիտալ սուբվենցիա	65000.0	63349.7	97.5
4	Սուբվենցիայի վերականգնում Ֆ/Բ	0.0	0.0	
5	Դրամաշնորհի հետ վերադարձ Ֆ/Բ-ից	0.0	-22.6	
	ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ	**917035.1**	**771620.2**	84.1

Հավելված 3
Սևան համայնքի ավագանու՝
22.09.2022թ. թիվ 80-Ա որոշման

	ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ			
			ՀԱԶԱՐ ԴՐԱՄՆԵՐՈՎ	
Հ/Հ	ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	2022Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ		
		ՊԼԱՆ	ՓԱՍՏԱՑԻ	ՏՈԿՈՍ
1	Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ	243949.2	183173.4	75.1
2	Տնտեսական հարաբերություններ	5150.0	0.0	0.0
3	Շրջակա միջավայրի պաշտպանություն	110912.5	92556.9	83.5
4	Բնակարան.տնտեսություն	8987.0	4077.8	45.4
3	Մշակույթի գծով ծախսեր	32898.5	26966.0	82.0
4	Կրթության գծով ծախսեր	216000.0	215147.4	99.6
5	Սոցիալական պաշտպանութուն	11955.0	10432.5	87.3
6	Վ/Բ պահ.ֆոնդից հատկացում Ֆ/Բ	13000.0	12200.0	93.8
7	Այլ ծախսեր	0.0	0.0	
	ԸՆԴԱՄԵՆՐ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	**642852.2**	**544554.0**	**84.7**
	ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ, ՈՐԻՑ	**199732.5**	**187962.8**	**94.1**
1	Համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանման ծախսեր	1834.0	1630.0	88.9
2	Ընդհ. բնույթի համայնքային ծառայություններ	1000.0	850.0	85.0
3	Տնտեսական հարաբերություններ /ճանապարհային տնտեսություն/	160010.0	150667.7	94.2
4	Փողոցների լուսավորման ցանցի կառուցում	15000.0	14834.5	98.9
5	Կրթության գծով ծախսեր	6778.0	4893.1	72.2
6	Բնակարանային տնտեսություն	5300.0	5277.0	99.6
7	Մշակույթի գծով ծախսեր	9810.5	9810.5	100.0
	Այլ ծախսեր			
	ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ	**829584.7**	**720316.8**	**86.8**